ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ություն N 1
Հայտերի բացման նիստի

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար կապի սարքավորումների ձեռքբերում

Գնման ծածկագիրը-**ՔԳՀԿ 12/26**
Գնման տեսակը-**Գնանշում**
Գնումը ներառված է ՔԳ 2026-2028թթ. ներդրումային ծրագրի 6-րդ հավելվածում

Գնման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել էր gnumner.am, coupa, armtimes.com, itender.am, tender@tender.am էլ. կայքերում և ՔոնթուրԳլոբալ-ի պաշտոնական կայքում 2026թ-ի մայիսի 15-ին:

2026թ մայիսի 27-ին, Ժամը՝ 11^{00}-ին Ք. Գորիս, ՀՀ

Մասնակցում են՝	
Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան Արամ Արեխցյան Դավիթ Մկրտչյան

1. Սույն թվականի մայիսի 27-ին, ժամը 11:00-ին, առցանց՝ COUPA համակարգի միջոցով, բացվեցին 12/26 ծածկագրով գնանշման մրցույթի տեխնիկական և ֆինանսական առաջարկները: Մրցույթն իրականացվել է 2 չափաբաժիններով:
2. Սահմանված ժամկետում COUPA համակարգի միջոցով հայտ էին ներկայացրել հետևյալ 2 (երկու) ընկերությունները՝

N	Չափաբաժին	«Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ	«Լանս» ՍՊԸ
1.	Ֆինանսական առաջարկը չափաբաժին 1	1,459,700 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ	1,812,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ
2.	Ֆինանսական առաջարկը չափաբաժին 2	2,757,800 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ	3,384,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ

3. Ստացված տեխնիկական և ֆինանսական առաջարկները գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել և գնահատվել են, որի արդյունքում արձանագրվել է հետևյալը՝

- մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները համապատասխանում են տեխնիկական բնութագրի և հրավերի պահանջներին, իսկ ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախատեսված ֆինանսական հատկացումների չափը:

4. Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոգրյալը, որոշեց՝
   - իրականացնել անգլիական աճուրդ՝ սահմանված կարգով և մասնակիցներին պատշաճ ծանուցում տրամադրելուց հետո, նպատակ ունենալով ապահովել առավել մրցակցային գնային առաջարկների ներկայացում:

Նիստին ներկա մասնակիցների անունները, ազգանունները.

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	Արամ Մելքումյան	
Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Արեխցյան	
	Դավիթ Մկրտչյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արևիկ Նիկոլայան	